

**ՇԻՐԱԿԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Մարտիրոսյան Լ.Մ., Աբրահամյան Վ.Մ.

Շիրակի պետական համալսարան, Հայաստանի Հանրապետություն mlevon2003@mail.ru

2018թ դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառված է է 24102 պատմամշակութային հուշարձան [2]: Պետք է նշել, որ որպես զբոսաշրջային ռեսուրս օգտագործվում է դրանց չնչին մասը: Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման ներկայիս տեմպերի պայմաններում կարևորվում է այս առումով քիչ հայտնի տարածաշրջանների և մասնավորապես Անիի տարածաշրջանի ռեսուրսների գնահատումը, որը թույլ կտա աշխուժացնել Շիրակի մարզի հարավ-արևմտյան ենթաշրջանի տնտեսական զարգացումը:

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ Շիրակի մարզի հարավ-արևմուտքում տարածվող Անիի տարածաշրջանի ռեկրեացիոն հնարավորությունները: Այս նպատակով իրականացված վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ տարածքի ռեկրեացիոն ներուժը հանդիսանում են ոչ միայն յուրահատուկ բնական պայմանները, այլև եզակի պատմաճարտարապետական հուշարձանները: Անիի տարածաշրջանի համար բարենպաստ է նաև տնտեսաաշխարհագրական դիրքը: Տարածաշրջանի արևմտյան մասով, Ախուրյանի հովտով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղին, որը բազմաթիվ բնակավայրերում ունի կայարաններ: Երկաթուղու առկայությունը հետազոտվող տարածքում նպաստավոր է ուղևորափոխադրումների և մասնավորապես զբոսաշրջիկների համար: Տարածքի բնակավայրերի հիմնական մասը երկաթուղային կայարանից հեռու են ընդամենը 2-3կմ: Անիի շրջանով անցնում են նաև ավտոմոբիլային ճանապարհներ: Տարածաշրջանի արևմտյան եզրով, երկաթուղուն զուգահեռ անցնում է Գյումրի-Արմավիր հանրապետական նշանակության մայրուղին, որին կապված են բոլոր բնակավայրերը: Հետազոտվող տարածքում հնարավոր է անցկացնել, տարանցիկ, երթուղիներ: Ընդ որում, դրանք կարելի է իրականացնել ինչպես Գյումրու, այնպես էլ Արմավիրի զբոսաշրջային երթուղիների հետ:

Անիի տարածաշրջանում պատմամշակութային (ՊՄ) հուշարձանները տեղաբաշխված են անհավասարաչափ, դրանք հիմնականում գտնվում են Ախուրյանի հովտում: Չնայած դրանց քանակությունը դեռևս պատկերացում չի տալիս հուշարձանի ճանաչողական արժեքի և գրավչության մասին: Կարևոր է ևս մեկ հանգամանք. ինչքան է պիտանի ՊՄ հուշարձանը զբոսաշրջային օգտագործման համար և հնարավոր՝ դրա ընդգրկումը զբոսաշրջային երթուղիների մեջ:

Նկատի ունենալով վերևում ասվածն անհրաժեշտ ենք համարել իրականացնել ՊՄ հուշարձանի գնահատում ըստ որոշակի հատկանիշների և գործոնների: Այս առումով առավել կարևոր են դառնում.

1. ՊՄ հուշարձանի հեռավորությունը գլխավոր մայրուղիներից, ճանապարհների որակը և մատչելիությունը:

2. ՊՄ հուշարձանի պահպանվածության վիճակը և տարիքը:

3. Զբոսաշրջային ենթակառուցվածքների առկայությունը:

Նշված ցուցանիշների գնահատման համար կազմվել են սանդղակներ, որտեղ ըստ նպատակահարմարության տրվել են ինչպես բալեր, այնպես էլ գործակիցներ:

Ընդհանուր առմամբ մեր կողմից հետազոտվել են պատմամշակութային երեք հուշարձաններ, որոնք հաշվառված են ՀՀ կառավարության կողմից պահպանվող հուշարձանների ցանկում:

Աղյուսակ 1-ում ներկայացված է այսպես կոչված մատչելիության գործակիցը, որի հիմքում դրված են ճանապարհների որակական հատկանիշները: Քանի որ ճանապարհային ցանցի որակն ուղղակիորեն կապված է զբոսաշրջիկների հարմարավետ տեղափոխման և նրանց անվտանգության հետ, մեր կողմից նպատակահարմար է համարվել կիրառել գործակից, որը կարող է նվազեցնել կամ ավելացնել ՊՄ հուշարձանի ընդհանուր, գումարային զբոսաշրջային արժեքը: Նման գնահատում արդեն իրականացված է մեր կողմից [1]:

Աղյուսակ 1: Տրանսպորտային մատչելիության գնահատման սանդղակ

Ճանապարհի վիճակը	Մասշտաբային գործակիցը
Վատ: Գրունտային ճանապարհ, կոշտ ծածկի բացակայություն: Դժվարանցանելի: Տեղումների դեպքում վտանգի հավանականություն: Տեղափոխությունը ամենազնայնը:	0,1
Միջին: Մասամբ կոշտ ծածկով: Համեմատաբար դժվարանցանելի: Տեղումների դեպքում անվտանգ: Երթևեկությունը միայն փոքր ավտոբուսներով:	0,2
Լավ: Կոշտ ծածկի առկայություն: Դյուրանցանելի: Տեղումների դեպքում անվտանգ: Երթևեկությունը բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներով:	0,3

Աղյուսակ 2-ում ներկայացված է ՊՄ հուշարձանների դասակարգման սանդղակը և զբոսաշրջային ենթակառուցվածքների առկայությունը: Այս ցուցանիշներն առավել նպատակահարմար է գնահատել բալերով: Գնահատման հիմքում դրվել են որակական հատկանիշներ:

Աղյուսակ 2. Պատմամշակութային հուշարձանների դասակարգման և զբոսաշրջային ենթակառուցվածքների գնահատման սանդղակ:

Հուշարձանի տիպը	Հուշարձանի տեսակը	Հուշարձանի վիճակը	Գործակիցը	Ժամանակաշրջան	Խալ	Զբոսաշրջային ենթակառուցվածքը	Բալ
	Եկեղեցիներ,	Վատ պահպանված	0,1	Հին շրջան մինչև 4 դ	4	Բացակայում է:	1

Հոգևոր- պաշտամու նքային	մատուոնե ր,	Միջին պահպանված.	0,3	Միջնադար 4-17 դդ.	3		
	խաչքարե ր	Լավ պահպանված	0,5	Նոր շրջան 18դ-1918թ.	2	Դիտահրապարա կ	2
				Նորագույն շրջ. 1918-մինչ օրս	1		Էքսկուրսիոն ծառայ.
Քաղաքացի ական, ռազմական	Քարավա նատներ, բերդեր, ամրոցներ	Վատ պահպանված	0,1	Հին շրջան մինչև 4 դ	4	Բացակայում է:	1
		Միջին պահպանված.	0,3	Միջնադար 4-17 դդ.	3		
		Լավ պահպանված	0,5	Նոր շրջան 18դ- 1918թ.	2	Դիտահրապարա կ	2
				Նորագույն շրջ. 1918-մինչ օրս	1	Էքսկուրսիոն ծառայ.	3

Հուշարձանների պահպանվածության վիճակը մեր կողմից գնահատվել է երեք որակական աստիճանով. Վատ պահպանված, միջին պահպանվածության և լավ պահպանված: Երկարամյա ուսումնասիրությունների հիման վրա կարելի է ասել, որ համեմատաբար լավ են պահպանված նոր և նորագույն շրջանների հուշարձանները: Որպես կանոն, միջնադարյան և հին շրջանի հուշարձանները պահպանված են ավելի վատ և դրանք չունեն դիտողական արժեք:

Նկատի ունենալով այս հանգամանքը, ՊՄ հուշարձանի պահպանվածության գնահատման համար կիրառվել է գործակից (K): Ընդ որում այս գործակիցը կիրառվել է միայն հուշարձանի հնության գնահատման բալի հետ (տես՝ բանաձև 1):

Մեր կողմից կարևորվել է նաև զբոսաշրջային ենթակառուցվածքների առկայությունը, որի գնահատումը կատարվել է բալային համակարգով:

Աղյուսակ 3-ում ներկայացված գնահատման արդյունքները հաշվարկվել են հետևյալ բանաձևով.

$$R = (A \times K + B) \times K_1 \quad [1]$$

որտեղ՝ R – ՊՄ հուշարձանի զբոսաշրջային արժեքն է

A – հուշարձանի հնության բալը

K – հուշարձանի պահպանվածության գործակիցը

B – զբոսաշրջային ենթակառուցվածքի գնահատման բալը

K₁ – մատչելիության գործակիցը

Ներկայացված բանաձևից պարզ է դառնում, որ վերջնական բալային արժեքը ստացվում է մատչելիության գործակցի կիրառումից հետո:

Գնահատման առավելագույն բալերի դեպքում, ՊՄ հուշարձանի զբոսաշրջային արժեքը կարող է հասնել 1,5:

Որպես հետազոտման օբյեկտ ընտրվել են երեք ՊՄ հուշարձաններ, Երերույքի տաճարը, Ջրափիի քարավանատունը և Հայկաձորի եկեղեցին:

Աղյուսակ 3. Անիի տարածաշրջանի մի քանի ՊՄ հուշարձանների գնահատման արդյունքները

Անվանումը	Հուշարձանի		Գործակից	Կառուցման ժամանակը	Բալ	Ենթակառուցվածք	Բալ	Ճանապարհների վիճակը (K _i)	Գործակից	Ընդամենը
	տեսակը	վիճակը (K)								
Երերույք	եկեղեցի	Միջ. Պահպ.	0,3	V դար	3	Բացակայում է	1	միջին	0,2	0,38
Զրափի	քարավանատուն	Վատ պահպ.	0,1	X-XI դար	3	Բացակայում է	1	միջին	0,2	0,26
Հայկաձոր	եկեղեցի	Լավ պահպ.	0,5	X դար	3	Բացակայում է	1	վատ	0,1	0,25

Եզրակացություններ: Կատարված հետազոտությունները թույլ են տալիս անել հետևյալ եզրակացությունները.

1. Անիի տարածաշրջանում առկա են զգալի թվով ՊՄ հուշարձաններ, որոնք հանրահայտ են ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս:
2. Գնահատման արդյունքում, ստացվել են միջինից ցածր ցուցանիշներ, ինչը վկայում է զբոսաշրջային համալիրի թույլ զարգացման մասին:
3. Անիի տարածաշրջանի ՊՄ հուշարձանների զբոսաշրջային գնահատման ոչ բարձր բալերի առաջացման հիմնական պատճառը հուշարձանների վատ վիճակն է, դրանց գրավչական ցածր արժեքը, ինչպես նաև զբոսաշրջային ենթակառուցվածքների իսպառ բացակայությունը:
4. ՊՄ հուշարձանների զբոսաշրջային գնահատման արդյունքերը ժամանակի ընթացքում կարող են ենթարկվել փոփոխության, քանի որ տնտեսական զարգացման հետ միաժամանակ փոփոխվում են նաև այն գործոնները, որոնց ցածր բալային կամ գործակցային արժեքների պատճառով գնահատման արդյունքում ստացվել են ցածր գնահատականներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մարտիրոսյան Լ.Մ., Աբրահամյան Վ. Մ. Շիրակամուտի (Վերին Փամբակի) զոգավորության զբոսաշրջային ռեսուրսները և դրանց գնահատումը: ԵՊՀ գիտական տեղեկագիր, պրակ Ա, № 1, 2016թ., էջ`120-129.
2. <http://armenpress.am/arm/print/434618/08.03.2016թ.>

TOURISTIC EVALUATION OF HISTORIC-CULTURAL MONUMENTS OF SHIRAK
(On the example of the Ani area of the Shirak region)

Martirosyan L.M., Abramyan V.M.

Shirak State University, Gyumri, Republic of Armenia, mlevon2003@mail.ru

ANNOTATION

The tourism evaluation system of historical landmarks, located in Shirak region, have been discussed in the article. The classification of monuments has been carried out. Several parameters have been evaluated by special coefficients to get more reliable datas.

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Սարգսյան Տ.Ա.

Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստանի Հանրապետություն
tigran.sargsyan@ysu.am

Զբոսաշրջության կայուն զարգացման (ԶԿԶ) վերաբերյալ ամփոփ և ամբողջական գաղափար կազմելու համար անհրաժեշտ է տարանջատված կերպով ներկայացնել դրա էությունը, հիմնական նպատակն ու վերջնարդյունքը:

Ըստ այդմ, ԶԿԶ-ն պետք է դիտարկել որպես զբոսաշրջության կազմակերպման և զարգացման հայեցակարգային-գաղափարական հենք ու մեթոդաբանություն, ինչպես նաև գործնական մոտեցումների և լուծումների համակարգ: Դրա նպատակն է ներդաշնակ համապատասխանության ապահովումը՝ մի կողմից զբոսաշրջության ու դրա զարգացման, մյուս կողմից՝ կայուն մարդկային զարգացման հայեցակարգի հիմնադրույթների (տնտեսական արդյունավետություն, սոցիալական արդարություն, էկոլոգիական անաղարտություն և անվտանգություն) միջև: Հետևաբար, ԶԿԶ վերջնարդյունքը կամ պրոդուկտը կայուն զբոսաշրջությունն է՝ որպես զբոսաշրջության զարգացման օպտիմալ մոդել կամ տեսլական:

Դ.Ուիվերի բնորոշման համաձայն, կայուն զբոսաշրջությունը կայուն զարգացման գաղափարների ներդրումն է զբոսաշրջության ոլորտում: Սա նշանակում է այնպիսի զբոսաշրջություն, որը կասկածի տակ չի դնի ներկա և գալիս սերունդների հնարավորությունները՝ սեփական կարիքները բավարարելու, լայնորեն կօգտագործի և կպահպանի ռեսուրսները՝ ապահովելով դրանց երկարաժամկետ օգտագործումը (Weaver, 2006):

Ըստ այդմ, կարելի է առանձնացնել կայուն զբոսաշրջության՝ կայուն զարգացման դրույթներին համահունչ զարգացող զբոսաշրջության հետևյալ չափանիշները.

- Լինել էկոլոգիապես անվտանգ և անվնաս, իրականացնել բնապահպանական գործառույթներ:
- Համապատասխանել սոցիալական հավասարության սկզբունքին, ներգրավված լինելու հավասար պայմաններ ու հնարավորություններ ստեղծել յուրաքանչյուրի համար:
- Լինել տնտեսապես շահավետ, խթանել այցելության վայրերի՝ դեստինացիաների սոցիալ-տնտեսական զարգացմանը:
- Պահպանել և հարգել մշակութային բազմազանությունը, նպաստել միջմշակութային երկխոսությանը: